Ф А Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր

Աշխարհի բոլոր պետությունների կառավարություններին, ՄԱԿ-ին, Եվրոխորհրդարանին, լրատվական բոլոր միջոցներին, միջազգային հանրությանը.

Հայտարարություն

Սույն թվականի օգոստոսի սկզբից նորից սրվեցին հայ-ադրբեջանական հարաբերությունները: Այսօր մենք կանգնած ենք ազգամիջյան պատերազմի շեմին: Դրան հանգեցրին Սովետական գաղտնի ոստիկանության գործակալների, զավթիչ Կարմիր բանակի հատուկ զորամիավորումների և կոմունիստական կուսակցության ղեկավարների միտումնավոր սադրիչ գործողությունները:

Արցախն այսօր ենթարկված է երկշերտ շրջափակման, առաջին շերտով՝ ադրբեջանական ծագումով խուժանի, երկրորդ շերտով՝ Կարմիր բանակի զորամիավորումների կողմից:

Սովետական զավթիչ բանակի հովանավորությամբ ադրբեջանական բանդաներ են հարձակվում Արցախի վրա: Այս ամենը Ռուսաստանի կայսրության հարյուրամյա <<բաժանիր, որ տիրես» քաղաքականության արգասիքներն են, որ նոր թափով սկսեցին դրսևորվել գորբաչովյան վարչակարգի օրոք:

Մենք հայտարարում ենք, որ սպասվելիք բախումների և արյունահեղության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Կրեմլի և, մասնավորապես, անձամբ Գորբաչովի վրա: Իսկ Ձեր անտարբերությունն ու լռությունը կարող են բերել ողբերգական հետևանքների:

08.08.1989

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՈՒՄ